



The Armenian Apostolic Church
Sunday Bible Readings

Sunday of the World Church (Green)

April 6, 2008

Acts 9:23-31
1 Peter 2:1-10
John 2:23-3:12

This Reading is from the Acts of our Fathers the Apostles. ✠ May their blessings be upon us.

9:23 When many days had passed, the Jews plotted to kill him, 24 but their plot became known to Saul. They were watching the gates day and night, to kill him; 25 but his disciples took him by night and let him down over the wall, lowering him in a basket. 26 And when he had come to Jerusalem he attempted to join the disciples; and they were all afraid of him, for they did not believe that he was a disciple. 27 But Barnabas took him, and brought him to the apostles, and declared to them how on the road he had seen the Lord, who spoke to him, and how at Damascus he had preached boldly in the name of Jesus. 28 So he went in and out among them at Jerusalem, 29 preaching boldly in the name of the Lord. And he spoke and disputed against the Hellenists; but they were seeking to kill him. 30 And when the brethren knew it, they brought him down to Caesarea, and sent him off to Tarsus. 31 So the church throughout all Judea and Galilee and Samaria had peace and was built up; and walking in the fear of the Lord and in the comfort of the Holy Spirit it was multiplied.

The word of the Lord shall grow, multiply, be mighty, and be confirmed in the Holy Church of God. ✠ Amen.

**Ընթերցուածս ի Գործոց Առաքելոց. ✠
օրհնութիւն նոցա ի վերայ մեր:**

Թ.23 Շատ օրեր անցնելէն ետք՝ Հրեաները խորհրդակցեցան որ սպաննեն զայն. 24 բայց Սողոսի յայտնուեցաւ անոնց դատադրութիւնը: Յերեկ ու գիշեր կը հսկէին դռները, որպէսզի սպաննեն զայն: 25 Իսկ աշակերտները գիշերուան մէջ առին զայն եւ պարիսպէն վար իջեցուցին՝ զամբիտի մը մէջ: 26 Երբ Սողոս եկաւ Երուսաղէմ՝ կը ձգտէր միանալ աշակերտներուն. բայց բոլորն ալ կը վախճային իրմէ, չհաւատալով թէ ան աշակերտ էր: 27 Բայց Բառնաբաս՝ առնելով զայն՝ տարաւ առաքելներուն ու պատմեց անոնց թէ ինչպէս ճամբան տեսաւ Տէրը՝ որ խօսեցաւ իրեն հետ, եւ թէ ինչպէս համարձակութեամբ քարոզեց Յիսուսի անունով՝ Դամասկոսի մէջ: 28 Ոստի կը մտնէր ու կ'ելլէր անոնց հետ Երուսաղէմի մէջ, համարձակութեամբ քարոզելով Տէր Յիսուսի անունով: 29 Նաեւ կը խօսէր եւ կը վիճաբանէր Հելլենացիներուն հետ. անոնք ալ կը ձգտէին սպաննել զինք: 30 Իսկ եղբայրները՝ ասիկա գիտնալով՝ զինք իջեցուցին Կեսարիա, եւ անկէ ճամբեցին Տարսոն: 31 Ուրեմն եկեղեցիները խաղաղութիւն ունեցան ամբողջ Հրեաստանի, Գալիլեայի ու Սամարիայի մէջ, եւ կը շինուէին ու կը բազմանային՝ ընթանալով Տէրոջ վախով եւ Սուրբ Հոգիին մխիթարութեամբ:

Բանն Աստուծոյ աճիցէ, բազմանայցէ, հզօրանայցէ, եւ հաստատիցէ յԵկեղեցւոջն Սրբբոյ. ✠ ամէն:

**This reading is from the First
Universal Epistle of Peter the Apostle.**

✠ **May his blessings be with us.**

2:1 So put away all malice and all guile and insincerity and envy and all slander. 2 Like newborn babes, long for the pure spiritual milk, that by it you may grow up to salvation; 3 for you have tasted the kindness of the Lord. 4 Come to him, to that living stone, rejected by men but in God's sight chosen and precious; 5 and like living stones be yourselves built into a spiritual house, to be a holy priesthood, to offer spiritual sacrifices acceptable to God through Jesus Christ. 6 For it stands in scripture "Behold, I am laying in Zion a stone, a cornerstone chosen and precious, and he who believes in him will not be put to shame." 7 To you therefore who believe, he is precious, but for those who do not believe, "The very stone which the builders rejected has become the head of the corner," 8 and "A stone that will make men stumble, a rock that will make them fall"; for they stumble because they disobey the word, as they were destined to do. 9 But you are a chosen race, a royal priesthood, a holy nation, God's own people, that you may declare the wonderful deeds of him who called you out of darkness into his marvelous light. 10 Once you were no people but now you are God's people; once you had not received mercy but now you have received mercy.

Do not love the world, nor the things which are in the world. The world shall pass and all its desires, but he who does the will of God shall abide forever. ✠ Amen.

**Պետրոս առաքելոյն առաջի ընդհանրական թղթոյն
է ընթերցուածս. ✠ օրհնութիւն նորա ի վերայ մեր:**

Բ.1 Ուրեմն, թօթափելով ամէն չարամտութիւն եւ ամէն նենգութիւն, կեղծատրութիւնները, նախանձներն ու բոլոր բամբասանքները, 2 նորածին երախսներու պէս տենչացէ՛ք Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին, որպէսզի աճի՛ք անով (մինչեւ փրկութիւնը), 3 եթէ համտեսած էք Տէրոջ քաղցր ըլլալը: 4 Մօտեցէ՛ք անոր՝ ապրող քարին, որ արդարեւ մարդոցմէ մերժուած է, բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական է: 5 Դո՛ւք ալ՝ ապրող քարերու պէս՝ կը շինուիք իբր հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, որպէսզի մատուցանէք հոգեւոր զոհեր, Աստուծոյ ընդունելի՛ Յիսուս Զրիստոսի միջոցով: 6 Որովհետեւ Գիրքին մէջ ալ կայ. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ ծայրագոյն անկիւնաքար մը, ընտիր ու պատուական, եւ ո՛վ որ հաստայ անոր՝ բնա՛ւ ամօթահար պիտի չըլլայ»: 7 Ուրեմն ձեզի՛ որ կը հաստայք՝ պատուական է ան, իսկ անհնազանդներուն համար՝ «այն քարը՝ որ կառուցանողները մերժեցին, անիկա՛ եղաւ անկիւնաքարը, 8 ու սայթաքումի քար եւ գայթակղութեան ժայռ» անոնց՝ որ խօսքին անհնազանդ ըլլալով կը գայթին, որուն համար ալ որոշուած էին: 9 Բայց դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն մը, սուրբ ազգ մը, սեփական ժողովուրդ մը, որպէսզի հռչակէք առաքինութիւնները անո՛ր՝ որ կանչեց ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին: 10 Ժամանակին ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք:

Մի սիրէք զաշխարհս, եւ մի որ ինչ յաշխարհի է: Աշխարհս անցանէ՛ եւ ցանկութիւն. իսկ որ առնէ՛ զկամս աստուծոյ՝ մնայ ՚ի յաիտեան. ✠ ամէն:

✦ **The Holy Gospel of Jesus
Christ according to John**

2:23 Now when he was in Jerusalem at the Passover feast, many believed in his name when they saw the signs which he did; 24 but Jesus did not trust himself to them, 25 because he knew all men and needed no one to bear witness of man; for he himself knew what was in man. 3:1 Now there was a man of the Pharisees, named Nicodemus, a ruler of the Jews. 2 This man came to Jesus by night and said to him, “Rabbi, we know that you are a teacher come from God; for no one can do these signs that you do, unless God is with him.” 3 Jesus answered him, “Truly, truly, I say to you, unless one is born anew, he cannot see the kingdom of God.” 4 Nicodemus said to him, “How can a man be born when he is old? Can he enter a second time into his mother’s womb and be born?” 5 Jesus answered, “Truly, truly, I say to you, unless one is born of water and the Spirit, he cannot enter the kingdom of God. 6 That which is born of the flesh is flesh, and that which is born of the Spirit is spirit. 7 Do not marvel that I said to you, ‘You must be born anew.’ 8 The wind blows where it wills, and you hear the sound of it, but you do not know whence it comes or whither it goes; so it is with every one who is born of the Spirit.” 9 Nicodemus said to him, “How can this be?” 10 Jesus answered him, “Are you a teacher of Israel, and yet you do not understand this? 11 Truly, truly, I say to you, we speak of what we know, and bear witness to what we have seen; but you do not receive our testimony. 12 If I have told you earthly things and you do not believe, how can you believe if I tell you heavenly things?”

✦ **Glory to You O Lord our God!**

✦ **Սրբոյ անտարախ Յիսուսի
Քրիստոսի որ ըստ Յովհաննու:**

Բ.23 Երբ Չատիկի տօնին ատենը Երուսաղէմ էր, շատ մարդիկ հաւատացին անոր անունին՝ տեսնելով անոր ըրած նշանները: 24 Բայց ինք՝ Յիսուս՝ չէր հաւատար անոնց, որովհետեւ կը ճանչնար ամէն մարդ. 25 պէտք չունէր՝ որ մէկը ուրիշ մարդու մասին վկայէր իրեն, քանի որ ինք գիտէր թէ ինչ կայ մարդուն մէջ: Գ.1 Փարիսեցիներէն մարդ մը կար՝ Նիկողեմոս անունով, որ Հրեաներու պետ մըն էր: 2 Ասիկա գիշերուան մէջ եկաւ Յիսուսի քով եւ ըսաւ անոր. «Ռաբբի՛, գիտենք թէ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես. որովհետեւ մէկը չի կրնար ընել այն նշանները՝ որ դուն կ'ընես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ»: 3 Յիսուս պատասխանեց անոր. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Եթէ մէկը վերստին չծնի՛ չի կրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը”»: 4 Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ ծնիլ մարդ մը՝ որ ծերացած է: Կարելի՞ է, որ երկրորդ անգամ մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: 5 Յիսուս պատասխանեց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Եթէ մէկը շուրէն ու Հոգիէն չծնի՛ չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը”»: 6 Մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Հոգիէն ծնածը՝ հոգի է: 7 Դուն մի՛ զարմանար որ ըսի քեզի. “Դուք պէտք է վերստին ծնիք”: 8 Հովը կը փչէ ո՛ր որ ուզէ. կը լսես անոր ձայնը, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ, կամ ո՛ր կ'երթայ: Ո՞վ որ Հոգիէն կը ծնի՛ այնպէս է»: 9 Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ ըլլայ ատիկա»: 10 Յիսուս պատասխանեց անոր. «Դուն Իսրայէլի մէջ վարդապետ մըն ես, ու չե՞ս գիտեր այս բաները: 11 Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, եւ ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու չէք ընդունիր մեր վկայութիւնը: 12 Եթէ երկրային բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատար՝ եթէ երկնային բաներու մասին խօսիմ ձեզի:

✦ **Փառք Քեզ, Տէր Աստուած Մեր:**